

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԼԻԼԻԹ ՎԱՍԱԿԻ ՏԻԳՐԱՆՑԱՆ

**ՀԱՐԱԼԵԶՎԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԳՈՐԾԱՌՈՒԹՅՈՒՆԸ ԱՆԳԼԵՐԵՆ
ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ և ԳԻՏԱԿԱՆ ՏԵՔՍՏԵՐՈՒՄ**

**Ժ.02.07 «Գերմանական լեզուներ» մասնագիտությամբ
բանասիրական գիտությունների թեկնածուի
գիտական աստիճանի հայցման ատենախոսության**

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ-2015

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի Վ.Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարանում:

Գիտական ղեկավար՝

բ.գ.թ., դոցենտ Ս.Մ. Գյուրջյանց

Պաշտոնական
ընդդիմախոսներ՝

բ.գ.դ., պրոֆ Ա.Ս. Հովհաննիսյան

բ.գ.թ., դոցենտ Ա.Հ. Գալստյան

Առաջատար կազմակերպություն՝

Վանաձորի Հ. Թումանյանի անվան
պետական մանկավարժական
համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2015 թ. մայիսի 27-ին, ժամը 12:30-ին, ՀՀ ԲՈՀ-ի Երևանի պետական համալսարանում գործող 009 «Օտար լեզուներ» մասնագիտական խորհրդի նիստում (Երևան, Ալեք Մանուկյան 1):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ԵՊՀ գրադարանում:

Սեղմագիրն առաքվել է 2015 թ. ապրիլի 25-ին:

Մասնագիտական խորհրդի
գիտական քարտուղար,
բ.գ.դ., պրոֆեսոր՝



Ե.Լ. Երզնկյան

Սույն ատենախոսությունը նվիրված է գրավոր խոսքի հարալեզվական նշանների կիրառման գործառական-գործաբանական օրինաչափությունների քննությանը և պատկանում է լեզվական միավորների մարդակենտրոն ուսումնասիրությունների թվին:

Թեմայի **արդիականությունը** պայմանավորված է հետևյալ գործոններով: Լեզվական միավորների՝ վերջին տասնամյակներում լեզվաբանության մեջ ձևավորված մարդակենտրոն ուսումնասիրության միտումը թելադրում է հարազրույթային միջոցների մանրակրկիտ և բազմակողմանի ուսումնասիրության անհրաժեշտությունը: Լեզվաբանների հետաքրքրությունը գրավոր խոսքի հարազրույթային, հիմնականում կետադրական նշանների ուսումնասիրության հանդեպ զգալիորեն աճել է, և ձևավորվել են հետազոտությունների արդիական մի շարք ուղղություններ, ինչպես օրինակ՝ կետադրության և բանավոր խոսքի հարաբերակցություն, զուգադրական կետադրություն, կետադրության պատմություն, գործառական առանձին ոճերի հարալեզվական միջոցների վերլուծություն, կետադրության գործաբանություն և այլն: Հարալեզվական նշանների կիրառմանը վերաբերող բազմաթիվ հարցեր, սակայն, դեռևս լուծում չեն ստացել, այդ թվում՝ հարազրույթային միջոցների գործառության առանձնահատկությունները գործառական տարբեր ոճերում և ենթաոճերում:

Ուսումնասիրության **օբյեկտը** անգլերենի գրավոր խոսքի հարալեզվական միջոցներն են, իսկ **առարկան**՝ գրավոր խոսքի հարազրույթային արտաքին և ներքին միջոցները և դրանց գործառության օրինաչափությունները:

Ատենախոսության **նպատակն** է վեր հանել գրավոր խոսքի հարազրույթային արտաքին (վերջակետ, հարցական և բացականչական նշաններ) և ներքին (բազմակետ, փակագծեր, շեղագիր և թավատառ) միջոցների գործառական առանձնահատկությունները գեղարվեստական և գիտական տեքստերում:

Ըստ նպատակի՝ աշխատության մեջ առաջադրվել և լուծում են ստացել հետևյալ **խնդիրները**.

1. ուսումնասիրել կետադրական նշանների ստեղծման և ձևավորման համառոտ պատմությունը,

2. քննական ուսումնասիրության ենթարկել հարազրույթային միջոցների մասին՝ լեզվաբանության և մասնավորապես՝ անգլերենի հետազոտության ոլորտում առկա պատկերացումները:

3. քննության առնել հարազրույթային միջոցների կիրառությունը գեղարվեստական և գիտական տեքստերում դրանց իմաստաբանական, կառուցվածքային և գործաբանական առանձնահատկությունների դիտանկյունից:

4. վեր հանել հարազրույթային արտաքին միջոցների՝ վերջակետի, հարցական և բացականչական նշանների գործառության առանձնահատկությունները գեղարվեստական և գիտական տեքստերում:

5. բացահայտել հարազրույթային ներքին միջոցների՝ բազմակետի և փակագծերի գործառության առանձնահատկությունները գեղարվեստական և գիտական տեքստերում:

6. քննել շեղագրի և թավատառի գործառության առանձնահատկությունները գեղարվեստական և գիտական տեքստերում:

Ատենախոսության **մեթոդաբանությունը** պայմանավորված է առաջադրված խնդիրներով: Նշված խնդիրների լուծման նպատակով աշխատանքում ուսումնասիրությունները կատարվել են մի շարք մեթոդների համադիր կիրառությամբ: Դրանցից են նկարագրական, համատեքստային, լեզվական փաստերի համադրման և վիճակագրական մեթոդները: Հիշյալ մեթոդների համալիր կիրառությունը հնարավորություն է տալիս պարզաբանելու գրավոր խոսքի հարալեզվական միջոցների դրսևորումները և համատեքստում իրացվող գործառույթները, ինչն էլ նպաստում է գրավոր խոսքի հարալեզվական միջոցների բազմակողմանի արժևորմանը:

Ատենախոսության **լեզվանյութը** ներառում է 19-21-րդ դարերի բրիտանական հեղինակների գեղարվեստական և գիտական ոճի 88 ստեղծագործություն (վեպեր, պատմվածքներ, պիեսներ և լեզվաբանական բնույթի գիտական աշխատություններ):

Ուսումնասիրության **տեսական հիմքը** կազմում են գրավոր խոսքի հարալեզվական, մասնավորապես՝ կետադրական նշանների տարատեսակ հիմնախնդիրներին նվիրված աշխատությունների հիմնական դրույթները¹:

Սույն ատենախոսության **գիտական նորույթն** այն է, որ առաջին անգամ կատարվում է անգլերեն գեղարվեստական և գիտական տեքստերի մի շարք հարալեզվական միջոցների վերջակետի, հարցական և բացականչական նշանների, բազմակետի, փակագծերի, շեղագրի, թավատառի գործառական և գործաբանական առանձնահատկությունների գուցադիր քննություն: Բացահայտվում է գեղարվեստական և գիտական տեքստերում վերջակետի, հարցական և բացականչական նշանների դերը խոսքային ակտերի ձևավորման գործում: Նոր է նաև հարագրությային նշանների առկա գործառույթների ճշգրտման ու հստակեցման, ինչպես նաև նոր գործառույթների բացահայտման փորձը: Հարալեզվական միջոցների ընդգրկուն համակարգում հարագրությային միավորների սահմանագատման փորձը թույլ է տալիս առավել արդյունավետ իրականացնել այս կամ այն հարագրությային նշաններով ձևավորված լեզվական միավորների գործառությային քննությունն ու արժևորումը:

¹ Stéu Nunberg, Geoffrey. *The Linguistics of Punctuation*. Stanford: CSLI, 1990; Patt S. *Punctuation as a Means of Medium-Dependent Presentation Structure in English*. Tübingen: Narr Verlag, 2013; Poyatos F. *Nonverbal Communication Across Disciplines: Paralanguage, kinesics, silence, personal and environmental interaction*. Amsterdam-Philadelphia: John Benjamins Publishing, 2002; Шубина Н.А. *Пунктуация в коммуникативно-прагматическом аспекте и ее место в семиотической системе русского текста*. Автореф. дисс. ... докт. филол. наук. СПб: Российский гос. пед. ун-т им. А.И.Герцена, 1999; Майзэнгер Н.В. *Позиционно-содержательная и прагматическая значимость знаков препинания в современном английском языке*. Автореф. дисс. ... канд. филол. наук. Барнаул: Барнаульский государственный педагогический университет, 2004:

Ատենախոսության **տեսական արժեքը** պայմանավորված է ավանդական և արդի մոտեցումների համադրի կիրառությամբ, որն էլ թույլ է տալիս վեր հանել գեղարվեստական և գիտական տեքստերում հարագրությային միջոցների գործածության յուրահատկությունները: Հարագրությային միջոցների հաղորդակցական և սպասարկու գործառնությունների տարանջատումը տեսականորեն նպաստում է գեղարվեստական և գիտական ոճերի սահմանազատմանը և կարող է հիմք դառնալ այս դիրքերից գործառական այլ ոճերի ուսումնասիրության համար:

Ատենախոսությունը ունի նաև որոշակի **գործնական արժեք**, քանի որ ստացված արդյունքները կարող են լայն կիրառություն գտնել տարբեր տեսական ու գործնական դասընթացներում (տեքստի մեկնաբանություն, անգլերենի տեքստաբանություն, զուգադրական տիպաբանություն և այլն): Ուսումնասիրված լեզվական նյութը կարող է արդյունավետ կիրառություն գտնել դասագրքերում, ձեռնարկներում և ավարտական հետազոտական աշխատանքներում:

Ատենախոսության մեջ առաջադրված նպատակով և խնդիրներով է պայմանավորված դրա **կառուցվածքը**: Այն բաղկացած է ներածությունից, երեք գլխից, եզրակացությունից և օգտագործված գրականության ցանկից (ընդհանուր ծավալը՝ 140 էջ):

Ներածության մեջ ներկայացվում են ատենախոսության թեման, աշխատանքի նպատակն ու խնդիրները, գործադրված մեթոդները, հիմնավորվում են թեմայի արդիականությունը, ատենախոսության գիտական նորույթը և նրա տեսական ու գործնական արժեքը:

Առաջին գլխիը (**«Հարալեզվական նշանները որպես գրավոր խոսքի ձևավորման միջոց»**) բաղկացած է երեք ենթագլխից:

Առաջին գլխի առաջին ենթագլխում (*«Անգլերենի կետադրական նշանների առաջացման ու ձևավորման պատմությունը»*) համակողմանիորեն ներկայացվում է անգլերենի կետադրական նշանների ձևավորման պատմությունը: Պատմական անդրադարձը բացահայտում է, որ Բրիտանիայում օգտագործվող կետադրական նշանների համակարգի հիմքում ընկած են հունարենի և լատիներենի կետադրությունները: Ձևավորման ու կիրառության մեջ մտնելու սկզբնական փուլում անգլերենի կետադրական նշանները սակավաթիվ էին և հազվադեպ էին օգտագործվում: Հետագայում այդ համակարգը սկսեց ընդլայնվել կետադրական նշանների ցանկի և գործառնությունների ընդլայնման արդյունքում: Ժամանակակից կետադրական նշանների զգալի մասը ներմուծել են իտալացի տպագրիչներ և հրատարակիչներ Ալբրու Մանուտիոս ավագը և Ալբրու Մանուտիոս կրտսերը: Արդեն 17-րդ դարում անգլերենի կետադրական նշանները ձեռք բերեցին իրենց ժամանակակից անվանումները, ավելին՝ համակարգ ներմուծվեց բացականչական նշանը:

Կետադրական նշանների դերն անընդհատ աճում է պատմական զարգացման ընթացքում: Կետադրական նշանների համակարգի ձևավորմանը հատկապես նպաստել են քրիստոնեության տարածումը և տպագրական մամլիչի գյուտը, որը հնարավորություն ընձեռեց մշակելու, կատարելագործելու և տարածելու կետադրական նշանների համակարգը: Ժամանակի ընթացքում կե-

տաղրական նշանների գործաբանական-հաղորդակցական և հաղորդակցական-ճանաչողական ներուժն աճեց՝ գրողին հնարավորություն տալով լիարժեք իրականացնելու իր հաղորդակցական նպատակները, իսկ ընթերցողին՝ արդյունավետ վերծանելու և ընկալելու գրավոր տեքստերը²:

Առաջին գլխի երկրորդ ենթագլխում («Առոզանության և կետադրության հարաբերակցությունը») քննության են առնվում լեզվաբանների տեսակետները առոզանության և կետադրության հարաբերակցության հարցի շուրջ: 20-րդ դարի ընթացքում գրավոր և բանավոր խոսքի հարաբերակցության խնդիրը բազմիցս է արծարծվել գիտնականների կողմից: Լեզվաբանության մեջ գոյություն ունի այս խնդրի լուծման երեք մոտեցում: Ըստ առաջին մոտեցման՝ բանավոր խոսքի հնչերանգը առաջնային է, իսկ գրավորի կետադրությունը երկրորդական՝ գրավոր խոսքում բանավորի առանձնահատկությունները նշելու միջոց: Երկրորդ մոտեցման կողմնակիցների կարծիքով՝ հնչերանգը և կետադրությունը առանձին, իրար հետ կապ չունեցող համակարգեր են: Երրորդ տեսակետի համաձայն՝ դրանք տարբեր, սակայն հավասարազոր համակարգեր են և իրար հետ անմիջական կապ ունեն: Ներկայումս ընդունվում են խոսքի բանավոր և գրավոր ձևերի (որպես առանձնահատուկ նշանային, բայց փոխկապակցված համակարգերի) իրավահավասարությունն ու ինքնավարությունը:

Առաջին գլխի երրորդ ենթագլուխը («Հարագրության միջոցների ուսումնասիրության տեսական հիմքերը») ներկայացնում է հարալեզվական միջոցների ուսումնասիրությանն առնչվող մի շարք տեսական հիմնահարցեր՝ խնդրառարկա միջոցների դասակարգումը, դրանց ուսումնասիրության հայեցակարգերը, կետադրության սկզբունքները: Քննության են ենթարկվում բազմաթիվ լեզվաբանների մոտեցումներն ու տեսակետները կետադրական նշանների համակարգի կազմի և դրանց գործառնությունների, առոզանության և կետադրության հարաբերակցության վերաբերյալ: Հատուկ ուշադրության է արժանանում գրավոր խոսքի հարագրության միջոցների ժամանակակից սահմանումը:

Որպես գրավոր խոսքի հարալեզվական երևույթներ որոշ լեզվաբաններ հիշատակում են կետադրական նշաններից միայն մի քանիսը և բազմաթիվ տպագրական միջոցները, մյուսները ներառում են նաև տեքստի մակերեսային տարափոխումը: Գ.Վ.Կոլշանսկին թվարկում է բազմաթիվ տպագրական միջոցներ՝ տեքստի միավորների գույնը, տպատառը, նկարները, գլխագրերը, իսկ կետադրական նշաններից՝ բազմակետը, հարցական և բացականչական նշանները հիշատակում է միայն այն դեպքում, երբ դրանք ոչ թե քերականական, այլ լեզվական միավորներին լրացուցիչ ոճական երանգ հաղորդելու դերն են կատարում: Ա.Գ.Բարանովը և Լ. Բ. Պարշինը տարբերակում են հարագրության միջոցների երեք տեսակ՝ համագրույ-

² St' u Parkes M.B. *Pause and Effect: an Introduction to the History of Punctuation in the West*. University of California Press, 1992; Levinson J.P. *Punctuation and the Orthographic Sentence: a Linguistic Analysis*. Ph. D. thesis. City University of New London: Longman, 1985:

թային միջոցներ, որոնք սահմանվում են որպես կետադրական նշանների գեղարվեստական-ոճական տարափոխում, վերգրության միջոցներ՝ տառատեսակի տարափոխում և տպագրության միջոցներ՝ տեքստի մակերեսային տարափոխում:

Նման մոտեցման դեպքում անհասկանալի է քերականական գործառույթի իրացնող կետադրական նշանների կարգավիճակը, քանի որ կախված տարբեր համատեքստերում կատարած գործառույթներից (քերականական, հարալեզվական, ոճական կամ ոչ ոճական)՝ միննույն նշանը կարող է հայտնվել տարբեր համակարգերում:³

Լեզվաբանների մեկ այլ խումբ ավելի լայն է մեկնաբանում գրավոր խոսքի հարալեզվական միջոցները՝ ներառելով բոլոր կետադրական նշանները:

Հարագրության միջոցների տարբեր սահմանումները ընդունում են դրանց ոչ խոսքային բնույթը և իմաստը լրացնող կամ իմաստի բացահայտմանը նպաստող գործառույթը: Ու թեև կետադրական նշանների տարբեր դասակարգումներում, իհարկե հաշվի են առնվում դրանց գործառույթները, սակայն կետադրական նշանների համակարգմի, դասակարգման և գործառույթների վերաբերյալ ընդհանուր մոտեցում դեռևս մշակված չէ: Բազմաթիվ դասակարգումների շարքում աչքի են ընկնում Ն.Լ.Շուբինայի և Ն.Վ.Մայգենգերի դասակարգումները որպես հարաբերականորեն առավել համակարգված և տրամաբանական դասդասում:

Ն.Լ.Շուբինայի մոտեցումն ապահովում է գրավոր խոսքի հարալեզվական միջոցների հակիրճ, բայց ամփոփ սահմանումը և կիրառելի է գրավոր խոսքի ոչ խոսքային բոլոր բաղադրիչների վերլուծության համար: Հարալեզվական միջոցների շարքում նա առանձնացնում է.

- 1) համագրության՝ միջուկային կետադրական նշաններ,
- 2) վերգրության նշաններ (երկրորդ կարգի միավորներ)՝ բացատ, շեղագիր, ցրիվ շարվածք, գրատեսակի տարափոխում,
- 3) տեքստի գրաֆիկական տարատեսակի ձևավորման համար օգտագործվող տեղագրական միջոցներ⁴:

Տարբեր լեզվաբանների կողմից առանձնացված կետադրական նշանների համակարգը համընկնում է միայն մասամբ: Բոլոր դասակարգումներում գրավոր խոսքի որոշ ոչ խոսքային միջոցներ կամ ընդհանրապես դուրս են մնում այդ համակարգից, կամ դասվում են տարբեր լրացուցիչ խմբերում, ընդ որում լրացուցիչ խմբի նշանների ցանկը նույնպես տարբեր է⁵: Այդ իսկ պատճառով

³ Տե՛ս Колшанский Г.В. Паралингвистика. Москва: Комкнига, 2009.

⁴ Տե՛ս Шубина Н.Л. Пунктуация в коммуникативно-прагматическом аспекте и ее место в семиотической системе русского текста. Автореф. дисс. ...докт. филол. наук. СПб: Российский гос. пед. ун-т им. А.И.Герцена, 1999:

⁵ Տե՛ս Partridge, Eric. *You Have a Point There: A Guide to Punctuation and its Allies*. London & New York: Routledge, 1953, Part S. *Punctuation as a Means of Medium-Dependent Presentation Structure in English*. Tübingen: Narr Verlag, 2013. Լրացուցիչ խմբերը հաճախ ստանում են տարբեր անվանումներ՝ «allies and accessories», «other marks», «mechanics»:

տրամաբանական է ենթադրել, որ լեզվաբանության մեջ կիրառվող «հարագրությամբ միջոցներ» եզրույթը հարկ է օգտագործել գրավոր խոսքի բոլոր ոչ խոսքային միջոցները անվանելու համար: «Հարագրությամբ միջոց» եզրույթի կիրառման դեպքում վերանում են տարածայնությունները կետադրական նշանների ցանկի վերաբերյալ, քանի որ այդ եզրույթը սահմանվում է որպես ցանկացած ոչ այբբենական միջոց: Ի տարբերություն Ն.Լ. Շուբինայի՝ մենք տարանջատում ենք համագրությամբ և վերագրությամբ նշանները տեքստի գրաֆիկական ձևավորման միջոցներից, քանի որ, այդ նշանները լեզվական հիմք ունեն և գործում են լեզվական միավորների հետ մեկտեղ:

Հարագրությամբ միջոցների գործառնությունների վերաբերյալ գոյություն ունեցող տեսակետների վերլուծության արդյունքում գալիս ենք այն եզրակացության, որ բոլոր նշված գործառնությունները նպատակահարմար է միավորել մեկ ընդհանուր *տեղեկատվական գործառնություն* ներքո, քանի որ հարագրությամբ միջոցները հաղորդում են տարատեսակ տեղեկություններ խոսքային միջոցների՝ բառային կառուցվածքի, նախադասության շարահյուսական կառուցվածքի, առգանական ձևավորման, հաղորդակցական և գործաբանական ներուժի, տեքստի կառուցվածքի և ոճային պատկանելության վերաբերյալ:

Հարագրությամբ միջոցների գործառնության վերլուծության ընթացքում, որպես կանոն, հիշատակվում են այդ միջոցների գործառնությունները: Մակայն հարագրությամբ միջոցների լիարժեք վերլուծության համար հաճախ անհրաժեշտություն է առաջանում նկարագրելու նաև հարագրությամբ միջոցներով ձևավորված լեզվական միավորների գործառնությունները: Այս նպատակով մեր ուսումնասիրության սահմաններում կիրառում ենք «հարագրությամբ միավոր» եզրույթը, որը սահմանում ենք որպես հարագրությամբ միջոցներով առանձնացված կամ ձևավորված լեզվական միավոր:

Մեր ուսումնասիրության համար ելակետային են Ն.Վ.Մայգենգերի և Ն.Լ. Շուբինայի տեսակետները: Հիմք ընդունելով նրանց դասակարգումները՝ մենք բնութագրում ենք մեր ուսումնասիրության համար ընտրած հարագրությամբ միջոցները հետևյալ կերպ.

- վերջակետը, հարցական և բացականչական նշանները համագրությամբ արտաքին սահմանազատող միադիր նշաններ են:

- բազմակետը համագրությամբ ներքին սահմանազատող միադիր նշան է: Մեր կարծիքով բազմակետը ներքին կետադրական նշան է, քանի որ այն ստեղծում է իմաստային անավարտվածության տպավորություն նույնիսկ այն դեպքում, երբ հանդիպում է քերականորեն ավարտված նախադասությունների և պարբերությունների վերջում՝ ստիպելով ընթերցողին տեքստի «համահեղինակ» դառնալ յուրովի շարունակելով, լրացնելով և մեկնաբանելով չպարզաբանված իմաստները:

- փակագծերը համագրությամբ ներքին առանձնացնող կրկնակի նշան են:

- շեղագիրը և թավատառը վերագրությամբ ներքին առանձնացնող նշաններ են:

Կետադրական նշանների գործառնության ուսումնասիրության համար կարևոր է պատկերացում կազմել տվյալ լեզվի կետադրության հիմքում ընկած

սկզբունքների մասին: Կետադրության տեսության մեջ ճանաչում են կետադրության երեք սկզբունք՝ *հնչերանգային, քերականական* և *իմաստային*, որոնց կիրառման ստորակարգությունը պայմանավորված է ազգային յուրահատկությամբ: Թեև ժամանակակից անգլերենում երեք սկզբունքներն էլ առկա են, սակայն գերիշխողը իմաստային սկզբունքն է:

Երկրորդ գլխի՝ («Հարագրության արտաքին միջոցների գործառնությունն անգլերենում») առաջին ենթագլխում («Գեղարվեստական և գիտական ոճերի ձևավորման լեզվական և արտալեզվական գործոնները») քննարկվում է գեղարվեստական և գիտական ոճերի ընդհանուր բնութագիրը, որը պայմանավորված է մի շարք արտալեզվական գործոններով՝ տեքստի գործաբանական ուղղվածությամբ, տեղեկատվական հագեցվածությամբ, շարադրանքի տրամաբանականությամբ և այլն, որոնք որոշակի դեր են խաղում ինչպես բանավոր, այնպես էլ գրավոր խոսքում կիրառվող հարալեզվական միջոցների ընտրության ու կիրառման հարցում:

Երկրորդ գլխի երկրորդ ենթագլխում («Հարագրության արտաքին նշանների լեզվագործաբանական արժեքը») ուսումնասիրվում են հարագրության արտաքին նշանների (վերջակետ, հարցական և բացականչական նշաններ) գործառական և գործաբանական առանձնահատկությունները, բացահայտվում են այդ նշանների կիրառման նմանություններն ու տարբերությունները գեղարվեստական և գիտական ոճերում, ինչպես նաև դրանց գործաբանական արժեքը:

Հարագրության արտաքին կետադրական նշանների գործառնությունը կապված է խոսքային տարբերակներում դրանց կիրառման հետ: Մովորաբար առանձնացնում են *ռեպրեզենտատիվներ*՝ տեղեկությունը որպես ճշմարիտ կամ կեղծ ներկայացնող, *դիրեկտիվներ*՝ հրաման կամ հարկադրանք արտահայտող, *կոմիսիվներ*՝ խոսողի պարտավորվածությունը արտահայտող, *վերդիրեկտիվներ*՝ կարծիք արտահայտող, *քվեսիտիվներ*՝ հարցում արտահայտող, *էքսպրեսիվներ*՝ խոսողի զգացմունքներն արտահայտող, հասարակական վարվելակարգի արտահայտությունները և *էմոտիվներ*⁶:

Իրացնելով տարբեր գործառնություններ վերջակետը կիրառվում է ինչպես գեղարվեստական, այնպես էլ գիտական տեքստերում. ավարտված իմաստ ունեցող նախադասությունների վերջում, տարանջատված կառույցներում, լիակատար արտասանություն ունեցող հապավումներում, թվական անուններում տասնորդականը ամբողջից անջատելու համար:

Տարանջատված կառույցներով ներկայացված հարագրության միավորները մի շարք գործառնություններ են կատարում՝ պատկերավոր, բնութագրող, հուզական-առանձնացնող և արտահայտչական-քերականական:

⁶ Տե՛ս Austin J.L. *How to Do Things with Words*. Oxford: Clarendon Press, 1962; Searle J.R. *Indirect Speech Acts // Syntax and Semantics*, v. 3, New York - San Francisco - London: Acad. Press, 1975; Вежбицка А. *Речевые акты // Новое в зарубежной лингвистике*. Вып.16.М.: Прогресс, 1985:

Պատկերավոր գործառույթի շնորհիվ առանձնացվում են ընդհանուր պատկերի մանրամասները և գեղարվեստական տեսանկյունից կարևոր տեղեկությունը:

What he saw there became his first memory. A small boy, a room, a bed, closed curtains leaking afternoon light. By the time he came to describe it publicly, sixty years had passed. How many internal retellings had smoothed and adjusted the plain words he finally used? Doubtless it still seemed as clear as on the day itself. **The door, the room, the light, the bed, and what was on the bed: a 'white, waxen thing'.**

[Barnes, *A Small Boy and a Corpse*]

Այս օրինակում հերոսի առաջին մանկական տպավորությունները հայտնվում են ընթերցողի ուշադրության կենտրոնում՝ շնորհիվ իրենց շարահյուսական կառուցվածքի՝ բազային նախադասությունից առանձնացված տարանջատված կառույցների:

Բնութագրող գործառույթը վերարտադրում է գործող անձի խոսքի առանձնահատկությունները:

He let the people have what they wanted. **Bread and circuses.** A new nation, and now he wanted us to join Europe, and who could say for sure that he was wrong? Steadied at last. Edward's thoughts dissolved, and he became once more his tongue, the very tip of it, at the same moment that Florence decided she could take no more.

[Mcewan, *On Chesil Beach*]

Հատվածի վերջին նախադասության *Edward's thoughts dissolved* սկիզբը հուշում է, որ նախորդ՝ տարանջատված կառույց պարունակող հատվածում ներկայացված է հերոսի ներքին խոսքը:

Հուզական-արտահայտչական գործառույթը սաստկացնում է զգացմունքները, արտահայտում է հուզական գնահատում կամ վիճակ:

'I am the way, the truth and the life': he is to hear this many times on his father's lips. **The way, the truth and the life.** You go on your way through life telling the truth. George knows that this is not exactly what the Bible means, but as he grows up this is how the words sound to him.

[Barnes, *A Small Boy and a Corpse*]

The way, the truth և *the life* բառերը կրկնվում են երկու անգամ, բայց միայն այդ բառերից կազմված տարանջատված կառույցի առկայությունն է, որ այս հատվածը հուզական է դարձնում:

Նշված երեք գործառույթները հանդիպում են միայն գեղարվեստական տեքստերում, ընդ որում *արտահայտչական-քերականական* գործառույթը ծայրում է շարահյուսական հարաբերությունների արտահայտմանը: Այս գոր-

ծառույթի դեպքում հարաբերությունները նախադասության անդամների միջև որոշակի փոփոխության են ենթարկվում: Տրամաբանական բնույթի շնորհիվ այս գործառույթը հանդիպում է նաև գիտական տեքստերում:

And what happens when sound linguistic principle and practice are ignored by well intentioned critics? **Intolerance, misguide attacks, and usually a large proportion of factual error.**

[Crystal, 1963: 6]

Տարանջատված կառույցը, առավել արտահայտիչ և համոզիչ դարձնելով հեղինակի կարծիքը, անմիջապես գրավում է ընթերցողի ուշադրությունը:

Հարցական նշանը հարցական կառուցվածք ունեցող նախադասություններում երկրորդական դեր է կատարում, քանի որ հարցական կառուցվածքն արդեն բնութագրում է նախադասությունը որպես հարցում և հարցական նշանն այս դեպքում միայն լրացուցիչ միջոց է: Հարցական նշանը երբեմն կարող է նաև բացակայել հարցում արտահայտող հարցական կառույցներում: Այս դեպքում դրա բացակայությունը յուրահատուկ գործառույթ է կատարում. կառույցին հաղորդում է որոշակի արտահայտչականություն և հուզականություն: Հարցական նշանի բացակայությունը հարցական կառույցներում ձեռք է բերում յուրահատուկ գործաբանական ներուժ՝ փոխվում է ոչ միայն կառույցի հուզական երանգը, այլև խոսքային ակտի բնույթը:

This relative, though in ordinary circs so genial and matey, can on occasion turn in a flash into a carbon copy of a Duchess of the old school reducing an underling to a spot of grease, and what is so remarkable is that she doesn't have to use a lorgnette, just does it all with the power of the human eye. I think girls in her day used to learn the trick at their finishing schools

'Will you kindly not bellow at me, Mr Runkle. I am not deaf. What is it?'

The aristocratic ice in her tone sent a cold shiver down my spine, but in L. P. Runkle she had picked a tough customer to try to freeze.

[Woodehouse, *Much Obligated, Jeeves*]

Բերված օրինակում հարցական նշանի բացակայությունը խնդրանքը վերածում է հրամանի, պահանջի: Կառույցի հուզական երանգի այս փոփոխությունն ընդգծում է նշված կառույցին հաջորդող նախադասությունը *The aristocratic ice in her tone sent a cold shiver down my spine.*

Բացականչական նշանն օգտագործվում է ինչպես յուրահատուկ կառուցվածք ունեցող բացականչական նախադասություններում և հուզական բնույթի ձայնարկություններում, այնպես էլ նախադասության շարահյուսական այլ տեսակներում՝ պատմողական, հարցական և հրամայական: Բացի հարցում արտահայտող քվեսիտիվներից, բացականչական նշանն օգտագործվում է բոլոր այլ խոսքային ակտերում՝ դրանց հուզականությունն հաղորդելով: Էմոտիվները

և հատկապես ոչ տեղեկատվական խոսքային ակտերը առավել հաճախ հանդիպում են դրամայում, ինչով և բացատրվում է բացականչական նշանի կիրառման համեմատաբար ավելի բարձր աստիճանը այդ ենթառոտում:

Բուն գիտական ոճի խիստ պաշտոնական, տրամաբանական ուղղվածությունը և տեղեկատվության հազեցվածության բարձր աստիճանը խիստ սահմանափակում են հուզականությամբ հազեցած հարցական կամ բացականչական նշանների գործածությունը: Գիտական տեքստում բացականչական նշանը հիմնականում հանդիպում է տարբեր աղբյուրներից քաղված օրինակներում, սակայն երբեմն այն հանդես է գալիս նաև հեղինակային տեքստում, հատկապես այն դեպքերում, երբ հատվածը բանավիճական բնույթ ունի: Օրինակ, բացականչական նշանը, վերածելով մենախոսությունը երկխոսության, ընդգծում է հեղինակի կարծիքը և նույնիսկ զգացմունքները քննարկվող հարցի վերաբերյալ:

Every now and then the “Radio Times” columns erupt into the national press with tirades and complaints about the use and abuse of English, [...]

But in the name of Roger, why!

[Crystal, 1963: 9]

Այս օրինակում բացականչական նշանը յուրահատուկ գործաբանական հազեցվածություն է հաղորդում նախադասությանը՝ հարցման համար կիրառվող *why* բառը վերածելով հեղինակի վրդովմունքն արտահայտող բացականչության:

Հարագրության յուրահատուկ նշանների կիրառման տարբերությունները գեղարվեստական և գիտական ոճի տեքստերում պայմանավորված են այդ ոճերի հիմնական և երկրորդական գործառնությունների տարբերությամբ: Գեղարվեստական ոճի հիմնական գործառնությունը գեղագիտականն է, որն, ըստ էության, իրացվում է տեքստի պատկերավորությամբ և արտահայտչականության հետ սերտորեն կապված հուզականությամբ, մինչդեռ գիտական ոճի հիմնական գործառնությունը ճանաչողականն է. պատկերավորությունը ոճակազմիչ դեր չի կատարում, իսկ արտահայտչականությունը առաջնային կարևորություն չունի: Այսպիսով, գեղարվեստական տեքստի արտահայտչականությունն ուղղված է իրականության հուզական-գեղագիտական վերարտադրմանը, իսկ գիտական ոճինը՝ տրամաբանական ներկայացմանը:

Երրորդ գլուխը՝ « Հարագրության ներքին միջոցների գործառնությունը անզերենում», ներկայացնում է հարագրության ներքին նշանների՝ բազմակետի, փակագծերի, շեղագրի ու թավատառի գործառնության առանձնահատկությունները գեղարվեստական և գիտական տեքստերում:

Երրորդ գլխի առաջին ենթագլխում («Բազմակետի և փակագծերի կիրառումը գեղարվեստական և գիտական տեքստերում») քննարկվում են բազմակետի և փակագծերի գործառնության յուրահատկությունները գեղարվեստական և գիտական տեքստերում: Առանձնացվում են բազմակետի մի շարք գործառնություններ, որոնք բնորոշ են միայն գեղարվեստական ոճին՝ կտրուկ փոփոխություն, խոսակցության

թեմայի փոփոխություն, գործողության անսպասելի արդյունք, խոսքի ընդհատում, որը կարող է լինել անավարտվածության, կարճատև լռության, կամ հապաղման արդյունք: Տեքստի որևէ տարրի բացթողնման գործառույթը իրականացվում է ինչպես գեղարվեստական, այնպես էլ գիտական տեքստերում: Օրինակ՝

- *հապաղում*

LADY CHESHIRE. Is his love big enough to carry you both over **everything?** ... You know it isn't.

FREDA. If I were a lady, you wouldn't talk like that.

[Galsworthy, *The Eldest Son*]

Այս դեպքում որոշ ժամանակ լռություն է տիրում, որովհետև Լեդի Չեշիրն իր հարցի պատասխանին է սպասում, սակայն չստանալով այն՝ շարունակում է իր խոսքը:

Հետաքրքիր է բազմակետի կիրառումը հետևյալ օրինակում:

He nodded to them as they went off down through the fields. He was, indeed, not sorry to be left thus for a quiet moment of reflection. The air was balmy, not too much heat in the sun; the prospect a fine one, a **remarka...** His head fell a little to one side; he jerked it up and thought: Odd! He—ah! They were waving to him from the bottom! He put up his hand, and moved it more than once. They were active—the prospect was **remar...** His head fell to the left, he jerked it up at once; it fell to the right. It remained there; he was asleep.

[Galsworthy, *The Man of Property*]

Բազմակետն այստեղ հանդիպում է անավարտ բառի վերջում և ցույց տալիս, որ Օեր Ջոլիոնի մտքերն ընդհատվում են, քանի որ նա սկսում է ննջել և ի վերջո քնում է:

Բացի բացթողնման գործառույթից, մնացած դեպքերում բազմակետը որոշակի ենթատեքստ մատնանշող հարագրությային նշան է: Լինելով ներակա իմաստի ցուցիչ՝ այն ապահովում է գեղարվեստական տեքստի խորքային և մակերեսային լեզվական մակարդակների փոխադեցությունը: Այդ գործառույթները կատարող բազմակետը գեղարվեստական տեքստերում ձեռք է բերում լրացուցիչ եղանակավորող-գործաբանական գործառույթ: Տեքստի հեղինակը, խուսափելով փոխարինել բազմակետը բառային միջոցներով, հնարավորություն է տալիս ընթերցողին ինքնուրույն լրացնել ենթադրվող լեզվական կամ արտալեզվական համատեքստը:

Փակագծերը տեքստի քերականական կառուցվածքի տեսանկյունից առանձնացնում են նախադասություն ներմուծվող տարբեր տեսակի միջանկյալ կառույցներ: Նախադասության կամ տեքստի իմաստային և տրամաբանական ամբողջականությունը չխախտելով՝ փակագծերը (ավելի ճիշտ՝ դրանցով առանձնացվող կառույցները), այնուամենայնիվ, միտումնավոր խախտում են կառուցվածքը, ինչի շնորհիվ առանձնացված հատվածի գործաբանական արժեքը առավել հազեցած է դառնում, քանի որ միջանկյալ կառույցով արտահայտված տեղե-

կուրծունը կարևորվում է հեղինակի տեսանկյունից: Տեքստը իմաստային և հնչե-
րանգային տեսանկյունից հատույթավորելով՝ փակագծերը նպաստում են տեղե-
կատվության հակիրճ ներկայացմանը և լեզվական միջոցների տնտեսմանը:
Միջանկյալ կառույցների և, հետևաբար՝ դրանք ներմուծող փակագծերի գործա-
ռույթները լեզվաբանական գրականության մեջ դասվում են երեք խմբի՝ սպա-
սարկու-մետատեքստային, հաղորդակցական և գնահատողական:⁷

Մեր քննությամբ վեր է հանվում գնահատողական գործառույթը հաղոր-
դակցականի հետ միավորելու հնարավորություն, քանի որ դրանց նպատակը
մեկն է. երկուսն էլ, ապահովելով լրացուցիչ տեղեկություն, նպաստում են տե-
ղեկատվության ընկալման *ընդլայնմանը* և *խորացմանը*, մինչդեռ սպասար-
կու-մետատեքստային գործառույթի նպատակն է երաշխավորել տեղեկատ-
վության *ճշգրիտ* ընկալումը ընթերցողի կողմից: Այսպես՝

‘Well!’ thought Alice to herself, ‘after such a fall as this, I shall
think nothing of tumbling down stairs! How brave they all think me
at home! Why, I wouldn’t say anything about it, even if I fell off
the top of the house! (**Which was very likely true.**)

[Carroll, *Alice’s Adventures in Wonderland*]

Բերված հատվածում փակագծերում տեղադրված հարագրության միա-
վորը հաղորդում է ընթերցողին, թե ինչպես է Ալիսը գնահատում տան կտու-
րից իր ընկնելու հավանականությունը:

Գեղարվեստական արձակից և դրամատիկական ստեղծագործություննե-
րից քաղված մեր հետազոտական նյութի շրջանակներում փակագծերի տար-
բեր կիրառությունների զուգադրական քննության արդյունքում բացահայտվել
է փակագծերի ևս մեկ գործառույթ, որը հանդիպում է միայն դրամայում, մաս-
նավորապես՝ հեղինակային նշագրումներում, որոնք ապահովում են բացա-
կայող տեսալտողական տեղեկատվությունը պիեսի հիմնական՝ երկխոսական
մասում, մեկնաբանում են պիեսի բեմական իրականացումը և արտահայտում
հեղինակի վերաբերմունքը նկարագրված իրադարձությունների և կերպարնե-
րի վերաբերյալ: Հեղինակային նշագրումների սպասարկու-մետատեքստային
կամ հաղորդակցական դերը պիեսի տեքստում պայմանավորված է նշագրում-
ների տեսակով (բեմական, բեմանկարային, բուն հաղորդակցական):

*Երրորդ գլխի երկրորդ ենթագլխում («Շեղագրի և թավատառի գործառույթ-
յան առանձնահատկությունները գեղարվեստական և գիտական տեքստերում»)*
քննության են առնվում շեղագրի և թավատառի կիրառության յուրահատկությ-
ունները: Այս միջոցների ուսումնասիրության անհրաժեշտությունը պայմա-
նավորված է ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման

⁷ Տե՛ս Гавриленко И. И. Информационно-смысловые функции вставных конструкций в научном стиле речи (на материале русского языка). <http://www.dialog-21.ru/Archive/2003/Gavrilenko.pdf>

հետ: Շեղագիրը և թավատառը, այլ հարագրությային միջոցների հետ մեկտեղ, նպաստում են տեքստի իմաստային կառուցվածքի ձևավորմանը և ապահովում են տեքստի արդյունավետ ընկալումն ու դրա հաղորդակցական-գործաբանական ազդեցությունը:

Ինչպես ցույց է տալիս մեր նյութի ուսումնասիրությունը, շեղագիրը, բացի լեզվաբանների կողմից հիշատակվող եզրույթներ, օտարալեզու տարրեր և վերնագրերի անվանումներ նշելու գործառնությունից,⁸ կատարում է նաև մի շարք այլ գործառնություններ, մասնավորապես՝ մեջբերումների և հաղորդակցական կենտրոնի նշում, օրինակների ներմուծում, հեղինակային նշագրումների առանձնացում, ընդ որում այս կիրառումների դեպքում այն հաճախ զուգակցվում է այլ հարագրությային միջոցների հետ: Օրինակ, հեղինակային նշագրումների շեղագիր գործածությունը հաճախ հանդիպում է փակագծերի մեջ:

MR TYLER: [*Bitterly.*] Late! I on my bicycle as I bowled along was already late. Now therefore we are doubly late, trebly, quadrapedly late. Would I had shot by you, without a word. [*Dragging feet.*]

[Beckett, *All That Fall*]

Գիտական և գեղարվեստական տեքստերի զուգադիր քննությունը թույլ է տալիս ոճական, ըստ էության, հակադիր այդ ոլորտներում վեր հանել շեղագրի կիրառության որոշ տարբերություններ: Օրինակ էթե գիտական տեքստին բնորոշ է օրինակների շեղագիր ներմուծումը, ապա գեղարվեստական տեքստերում շեղագրի կիրառումը տվյալ տեքստի հաղորդակցական կենտրոնը նշելու նպատակն է հետապնդում:

Թավատառի կիրառման դեպքերի մեր քննությունը նույնպես նշված գործառնական ոճերը ներկայացնող տեքստերում բացահայտել է որոշակի ընդհանրություններ և տարբերություններ: Վերնագրերում և ենթավերնագրերում թավատառի գործածությունների կարելի է հանդիպել թե՛ գիտական և թե՛ գեղարվեստական տեքստերում, մինչդեռ գեղարվեստական արձակի հեղինակային կամ դրամայի երկխոսական տեքստերում թավատառը սովորաբար գործածություն չի գտնում: Գիտական և հատկապես գիտաուսումնական տեքստերում թավատառը միանգամայն լայն կիրառություն ունի, մասնավորապես՝ նոր հասկացություններ ու եզրույթներ ներմուծելիս կամ արդեն ներկայացված տեղեկությունը ճշգրտելիս: Այսպես՝

⁸ St' u Carey G.V. *Mind the Stop. A Brief Guide to Punctuation with a Note on Proof-Correction.* London: Penguin Books, 1976; McCaskill M.K. *Grammar, Punctuation, and Capitalization.* Hampton, Virginia: Langley Research Center, 1998; Адаева О.М. *Семантика и метасемиотика знаков горизонтальной стратификации английской речи.* Дисс. канд. филол. наук. Самара: Самарский государственный педагогический университет, 2003:

A knowledge of phonetics and phonology will help you to study:
accent – social and regional variations in pronunciation can be transcribed exactly;

the history of English – changes in pronunciation can be identified and described accurately;

[Thorne 1986: 48]

Բերված օրինակում թավատառի գործածությամբ հեղինակը ընդգծում է այն հասկացությունների կարևորությունը, որոնց ուսումնասիրության համար անհրաժեշտ են գիտելիքներ հնչյունաբանության և հնչյութաբանության ոլորտներից: Հաջորդ օրինակում թավատառը ճշգրտման գործառույթ է կատարում:

The writing of Old English was much reduced, and when we look at written evidence for the language from about 1150 to 1450 (**Middle English**), we find marked difference from Old English in spelling, as well as changes in vocabulary, word-forms and grammar.

[Freeborn, 1986: 27]

Հեղինակը նշում է, որ 1150 – 1450 թթ. միջև ընկած ժամանակահատվածում անգլերենի ուղղագրության, ինչպես նաև բառային և քերականական համակարգերում զգալի փոփոխություններ էին տեղի ունեցել համեմատած հին անգլերենի հետ, և թավատառի ու փակագծերի օգնությամբ ճշգրտում, որ խոսքը միջին անգլերենի մասին է:

For linguists, **GRAMMAR** is a study of the **organization of language**.

[Thorne, 1997: 3]

Այս օրինակում ինչպես եզրույթը, այնպես էլ եզրույթի բացատրությունը տրվում են թավատառով՝ ընթերցողի ուշադրությունը գրավելու նպատակով:

Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ գիտական և գեղարվեստական տեքստերը էապես տարբերվում են հարագրությային նշանների կիրառության թե՛ հաճախականության և թե՛ տարաբնույթ գործառույթների իրացման տեսանկյունից: Թեև գիտական տեքստերին բնորոշ է հարագրությային նշանների առավել լայն համակարգի կիրառություն, որն ուղղված է գրավոր խոսքի բովանդակության հստակեցմանն ու պարզաբանմանը, այդուհանդերձ դրանց հաճախակի ու անհարկի գործածությունը կարող է լուրջ դժվարություններ ստեղծել տեքստի ընկալման պրոցեսում:

Ատենախոսությունն ամփոփվում է հետևյալ **եզրահանգումներով**.

1. հարագրությային միջոցների ձևավորման ու զարգացման պատմական հայեցակերպի քննական ուսումնասիրությամբ բացահայտվում են բազմաթիվ փոփոխություններ, ինչպես դրանց կազմի, այնպես էլ կատարած գործառույթ-

ների առումով, որոնք ժամանակի ընթացքում հասարակական գործոնների ազդեցությամբ տեղի են ունեցել այդ համակարգում:

2. հարագրությային միջոցների տեսաքննական դիտարկումները թույլ են տալիս այդ համակարգում տարանջատել խոսքի միկրո- և մակրո- մակարդակներում կիրառվող միջոցների երկու խումբ: համագրությային՝ միկրոմակարդակում և վերգրությային՝ մակրոմակարդակում:

3. գեղարվեստական և գիտական տեքստերում հարագրությային միջոցների ընտրությունն ու համապատասխան գործառնությունների իրացումը պայմանավորված է ոճագործական հիշյալ ուղղվածության տեքստերի իմաստաբանական, կառուցվածքային և գործաբանական առանձնահատկություններով:

4. համագրությային արտաքին նշանները (վերջակետ, հարցական և բացականչական նշաններ) տարաբնույթ խոսքային ակտերի ցուցիչներ են: Խոսքային ակտերը տարբեր ձևով են բաշխվում գեղարվեստական և գիտական տեքստերում, ինչն անդրադառնում է հարագրությային արտաքին միջոցների կիրառման հաճախականության վրա, ընդ որում՝ գեղարվեստական ոճում հարցական նշանի բացակայությունը տեքստին գործաբանական յուրահատուկ ներուժ է հաղորդում՝ ձևափոխելով խոսքային ակտի տեսակը:

5. գեղարվեստական և գիտական ոճերում արտահայտչականության աստիճանով և բնույթով պայմանավորված՝ հուզականությամբ հագեցված հարցական և բացականչական նշանների կիրառությունը գլխավորապես բնորոշ է գեղարվեստական և առավել հաճախ՝ դրամատիկական ստեղծագործություններին:

6. համագրությային ներքին նշանները (բազմակետ, փակագծեր) տարբեր հաճախականությամբ են կիրառվում գեղարվեստական և գիտական տեքստերում և կատարում են տարբեր գործառնություններ:

- բազմակետը, որի գործառնությունն առավել հաճախակի է գեղարվեստական արձակում և դրամայում, տեքստում իրացնում է հաղորդակցական տարբեր գործառնություններ (կտրուկ փոփոխություն, խոսքի ընդհատում, հազվադեպ բացթողում): Գիտական ոճի տեքստերում բազմակետի կիրառությունը հազվադեպ է, և այստեղ այն կատարում է բացթողման սպասարկու-մետատեքստային գործառնությո:

- փակագծերի առավել հաճախակի գործառնությունը բնորոշ է գիտական տեքստերին, որտեղ դրանք սպասարկու-մետատեքստային տարբեր գործառնություններ են իրացնում (բացատրություն, ճշգրտում, հղում և այլն): Գեղարվեստական ուղղվածության տեքստերում փակագծերը, բացի սպասարկու-մետատեքստային գործառնություններից, կատարում են նաև հաղորդակցական գործառնությո: Փակագծերի ներմուծումը լրացուցիչ երկրորդական տեղեկատվություն է ապահովում տեքստի հիմնական շարադրանքին զուգահեռ, որն էլ բարձրացնում է տեքստի տեղեկատվական հագեցվածության աստիճանը:

7. շեղագիրը և թավատառը տեքստի կետադրական-գրաֆիկական կառուցվածքի բաղադրիչներից են, որոնց օգտագործման նպատակն է նպաստել

տեքստի տեսողական և բովանդակային ընկալմանը: Զուգակցվելով այլ հարազրույթային միջոցների հետ՝ շեղագիրը և թավատառը ստեղծում են յուրահատուկ գործաբանական ներուժ, արտացոլում տեքստի շարահյուսական ու բովանդակային կառուցվածքը, սաստկացնում տեղեկատվական հագեցվածությունը և անդրադառնում տեքստակազմության օրինաչափությունների վրա:

8. հարազրույթային միջոցների կիրառումը դառնում է գեղարվեստական և գիտական արձակի տիպաբանական կարևոր հատկանիշ: Որոշակի (իմաստային, արտահայտչական) տեղեկություն հաղորդելով՝ հարազրույթային միջոցները գրավում են հասցեատիրոջ ուշադրությունը: Տեքստի տեղեկատվության վերհանումն անհնար է առանց այդ միջոցների կիրառման և վերձանման:

Աշխատանքի փորձարկում: Ատենախոսության առանձին դրույթները և արդյունքները քննարկվել են Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվա-հասարակագիտական համալսարանի գիտական սեմինարներում և տպագրվել են գիտական պարբերականներում և ժողովածուներում:

Հետազոտության հիմնադրույթները արտացոլված են հետևյալ հրապարակումներում՝

1. О соотношении интонационной структуры устного и письменного текста // Արդի բանասիրության հիմնախնդիրները: // Երիտասարդ գիտնականների հոդվածների ժողովածու, պրակ 5, Երևան, Լինգվա, 2006. էջ 223-226:
2. Система пунктуационных знаков английского языка и некоторые особенности их функционирования // «Կանթեղ» գիտական հոդվածների ժողովածու, 3 (40): Երևան, Ասողիկ, 2009. էջ 106-112:
3. Типе как способ выражения подтекста // Ռոմանագերմանական լեզվաբանության հիմնախնդիրներ: Երևան, Լինգվա, 2010. էջ 302-312:
4. Variability of Punctuation Marks in English // Armenian Folia Anglistika. International Journal of English Studies, 1-2 (11), Yerevan: Lusakn, 2013. էջ 47-50.

Тигранян Лилит Васаковна

ФУНКЦИОНИРОВАНИЕ ПАРАЛИНГВИСТИЧЕСКИХ СРЕДСТВ В ХУДОЖЕСТВЕННЫХ И НАУЧНЫХ ТЕКСТАХ

Диссертация на соискание ученой степени кандидата филологических наук по специальности 10.02.07 – “Иностранные языки”

Защита состоится 27-го мая, 2015 г., в 12:30 часов, на заседании
специализированного совета 009 ВАК РА
при Ереванском государственном университете
по адресу: Ереван, ул. Алека Манукяна 1

РЕЗЮМЕ

Реферируемая диссертационная работа посвящена анализу функционально-прагматических закономерностей употребления паралингвистических знаков письменной речи и относится к числу антропоцентрических исследований языковых единиц.

Определены следующие задачи исследования: представить краткую историю становления знаков препинания, проанализировать теоретические положения по исследуемой проблеме, выявить особенности функционирования ряда параграфемных средств.

Материалом исследования послужили тексты прозаических и драматургических произведений, а также тексты лингвистического характера.

Основная **цель** диссертационного исследования заключается в выявлении особенностей функционирования ряда внешних и внутренних параграфемных знаков (точки, вопросительного и восклицательного знаков, многоточия, скобок, курсива и жирного шрифта) в художественных и научных текстах.

Актуальность темы обусловлена тем, что несмотря на возросший интерес к комплексному изучению параграфемных средств языка и появление исследований в этой области, недостаточно освещены вопросы функционирования параграфемных знаков в различных функциональных стилях.

Новизна работы заключается в том, что в диссертации впервые сопоставляются функциональные и прагматические характеристики внешних параграфемных знаков в английских художественных и научных текстах. Впервые выделяется информативная функция синграфемных и супраграфемных средств, а также вводится понятие “параграфемной единицы”. Выявляются особенности функционирования внешних и внутренних параграфемных единиц.

Теоретическая значимость работы заключается в том, что диссертация представляет собой очередной вклад в антропоцентрические исследования параграфемных составляющих текста. Кроме того, данное исследование создает перспективы для анализа параграфемных средств других функциональных стилей английского языка и может способствовать дальнейшему развитию лингвистических методов при изучении текстов разной стилистической направленности.

Практическая значимость работы обусловлена тем, что ее результаты могут быть использованы при составлении курсов по интерпретации текста, сопоставительной типологии английского языка и т.д. Исследование может быть полезным при составлении учебников и учебных пособий, а иллюстративный материал можно использовать в практике преподавания.

Структура диссертации. Работа состоит из введения, трех глав, заключения, списка литературы.

Во **введении**, обосновывается выбор темы, определяются основная цель и конкретные задачи исследования, его актуальность, новизна, теоретическая и практическая значимость.

Первая глава включает краткую историю возникновения и становления знаков препинания и анализа ряда теоретических положений, касающихся изучения параграфемных средств, их классификации, а также соотношения просодии и пунктуации. Акцентируется внимание на определении знаков препинания как одного из параграфемных средств письменной речи.

Во **второй главе** анализируются лингвопрагматические характеристики художественного и научного стилей, исследуются функциональные и прагматические особенности внешних параграфических знаков, обсуждается вопрос о соотношении параграфемных знаков и речевых актов, а также выявляются сходства и различия в использовании параграфемных знаков в художественном и научном стилях.

Третья глава посвящена анализу особенностей функционирования внутренних синграфических и супраграфических средств в художественных и научных текстах, а также определяются функции параграфемных единиц, оформленных этими средствами.

В заключении обобщаются основные результаты и выводы.

FUNCTIONING OF PARALINGUISTIC MEANS IN BELLES-LETRES AND
SCIENTIFIC TEXTS

SUMMARY

The thesis **aims** at analyzing the functioning of paralinguistic means in belles-lettres and scientific texts and belongs to anthropocentric studies of linguistic units.

The following **objectives** have been set forth:

1. to give a short history of the English punctuation system;
2. to review various theoretical approaches to the analysis of paragraphemic means;
3. to describe the specific features of belles-lettres and scientific texts from the viewpoint of the use of paragraphemic means;
4. to analyse the functioning of external paragraphemic means in belles-lettres and scientific texts;
5. to identify the functions of syngraphemic means in belles-lettres and scientific texts;
6. to identify the functions of supraphemic means in belles-lettres and scientific texts.

Texts of belles-lettres (fiction and drama) and scientific styles have been selected for the present linguistic analysis.

The **topicality** of the present research is accounted for by the fact that the anthropocentric approach to the study of linguistic phenomena has created the basis for the analysis of non-verbal means from the viewpoint of their role in creating and interpreting texts, but a number of problems concerning the study of paragraphemic means, especially their functioning in different styles, have not been solved yet.

The **scientific novelty** of the research is determined by the fact that a comparative analysis of functional and pragmatic characteristics of belles-lettres and scientific texts is carried out for the first time. In the result of the comprehensive analysis of the paragraphemic means various communicative and auxiliary functions of these means are singled out.

The **theoretical significance** of the research is manifested in the fact that the results of the research can create a basis for analyzing the functioning of paragraphemic means in other functional styles. The analysis carried out in the work and the conclusions drawn as outcomes of the research may serve as a valuable

contribution to the anthropological studies of paragraphemic units, as well as the theory of functional styles.

The **practical value** of the research entails the possibility of using its theoretical principles, practical materials and conclusions for other scientific endeavors as well as applying them for creating various courses.

The **structure of the work** is determined by the issues touched upon in the research. It consists of an introduction, three chapters, a conclusion, a bibliography.


Introduction presents the subject matter, the topicality, the aim, and main objectives of the research, its theoretical and practical value.

Chapter 1 reviews the history of English punctuation marks and various theories touching upon the problems of defining and classifying paragraphemic means, their functioning as well as the correlation between prosody and punctuation

In **Chapter 2** the linguistic and pragmatic characteristics of belles-lettres and scientific texts and the functioning of the external paragraphemic signs in these styles are analysed and compared. Functional and pragmatic characteristics of the external paragraphemic means, as well as the specific features of their functioning are identified.

Chapter 3 deals with the analysis of the functioning of the internal syngraphic (dots and brackets) and supragraphic means (italic and bold fonts) in fiction, drama and scientific texts.

Conclusion summarizes the main findings of the research.

A handwritten signature in black ink, appearing to read 'L. G. Gerasimov'. The signature is written in a cursive style with a large, sweeping flourish at the end.